«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ և ՀՀ Կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանի մասնակցությամբ նոյեմբերի 16-ին Երևանի Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում տեղի ունեցավ ՀՀ և Արցախի հանրակրթական դպրոցների 4-10-րդ դասարանների «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքերի շնորհանդեսը, որին ներկա էին Հայաստանի թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ նախարարներ, օտարերկրյա դեսպանատների ներկայացուցիչներ, ուսուցիչներ և հրավիրյալներ:

Նոր առարկայի մուտքը հանրակրթական դպրոցներ վավերացվել էր դեռևս 2002 թվականին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի կողմից ստորագրված համաձայնագրով: Այս տարիների ընթացքում փուլ առ փուլ առարկան ընդգրկվեց հանրակրթական դպրոցների 4-10-րդ դասարանների ուսումնական ծրագրերում: Դասագրքերը ստեղծվել են ՀՀ Կրթության և գիտության նախարարության կրթական ծրագրերի բարեփոխումների կենտրոնի մասնագետների ու Հայ Եկեղեցու մի խումբ հոգևորականների ջանքերով:

Ըստ ծրագրի, 4-րդ դասարանցիները ծանոթանում են Հին եւ Նոր Կտակարաններին, 5-րդ դասարանցիները՝ քրիստոնեական Եկեղեցու նվիրապետական համակարգին, ուղղություններին ու խորհուրդներին, ազգային-եկեղեցական տոներին: 6-8-րդ դասարաններում ուսուցանվում է Հայ Եկեղեցու պատմություն՝ առաքելական շրջանից մինչև մեր օրերը, 9-10-րդ դասարաններում՝ քրիստոնեական բարոյագիտություն:

Հանդիսությունը բացեց Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Ղուկաս աբեղ. Զաքարյանը: Դասագրքերի ստեղծման անմիջական պատասխանատուներից է Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը: Նա անդրադարձավ ծրագրի իրականացման գործընթացին: ՀՀ Կրթության և գիտության նախարարը Սրբազան Հորը հանձնեց նախարարության բարձրագույն պարգևը՝ ոսկե մեդալը: Ծրագրի հանրակրթական նշանակության մասին խոսեց կրթական բարեփոխումների Ազգային ինստիտուտի տնօրեն Վիկտոր Մարտիրոսյանը:

ՀՀ Կրթության և գիտության նախարարը, անդրադառնալով աշխատանքային խմբի կատարած հսկայական աշխատանքին, իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Նորին Սրբության հայրական օրհնության, նախանձախնդրության և գործուն աջակցության համար:

«Այսօր բարի ավարտին են հասել աշխատանքները, դասագրքերը մեր առջև են, մեր դպրոցականների սեղաններին են: Հայաստանի անկախ Հանրապետության հայ դպրոցը, նրա կրթական համակարգն անկարելի էր պատկերացնել առանց «Հայ Եկեղեցու պատմության» առարկայի: Մեր կրթական համակարգը կլիներ թերի ու անկատար՝ առանց Հայ Եկեղեցու պատմության, որովհետև մեր

Եկեղեցու պարտությունը միայն կրոնական հաստատության պարտություն չէ: Մեր Եկեղեցու պարտությունը մասն է մեր ժողովրդի պարտության, նրա ոգին, ամբողջության շաղախն է այդ պարտության: Այսօր մենք ուրախ ենք, որ մեր ժողովրդի զավակները ճանաչում են ու հնարավորություն ունեն ճանաչելու մեր Եկեղեցու պարտությունը, մեր հայրերին ու հայրապետներին, իշխանություններին ու թագավորներին, կրթության ու գիտության, արվեստի լուսավոր գործիչներին, որոնց անդուլ աշխատանքով ու քրտինքով կերտվել է խորհուրդը հայոց պարտության, կերտվել է խորհուրդը մեր լինելության, մեր գոյության: Հայ Եկեղեցու պարտությունն անհրաժեշտաբար պետք է ուսուցանվի հայ դպրոցում, որպեսզի մեր ընթացքը միշտ Աստծո ճանապարհների վրա լինի, մեր կյանքի հունը քրիստոնեական բարոյական արժեքները լինեն, որպեսզի միշտ ընթանանք Աստծո հետ, որովհետև պարտությամբ վկայված է. գիտեք, որ Աստծուց հեռանալ, նշանակում է հեռանալ ազգությունից, նշանակում է հանձնել մեզ պարտության բեմից անհետանալու վտանգներին»,- նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Կրթության նախարարությանը, դասագրքերի հեղինակներին, խմբագրակազմին, «Տիգրան Մեծ» հրատարակչատան տնօրինությանը և այն բոլոր անձանց, ովքեր նպաստեցին դասագրքերի ստեղծմանը: Նորին Սրբությունը նաև մասնավոր իր բարձր գնահատանքը հայտնեց բարերարներ՝ տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնին, ում ազնիվ նվիրատվությամբ հրատարակվել են 4-10-րդ դասարանների դասագրքերը, և Իրմա ու Սիլվա Տեր-Ստեփանյան քույրերին, ովքեր «Ամասիա Տեր-Ստեփանյան հիմնադրամի» միջոցով հոգացին ուսուցիչների համար նախատեսված մեթոդական ձեռնարկների հրատարակումը:

Հանդիսության մասնակիցները դիտեցին նաև կրթական այս ծրագրի ներդրման մասին պատմող «Հոգևոր սերունդ» ֆիլմը՝ պատրաստված «Շողակաթ» հեռուստաընկերության կողմից: Շնորհանդեսի ընթացքում իրենց համերգային կատարումներով հանդես եկան Հայաստանի հնագույն շնչական նվագարանների «Տկզար» պետական նվագախումբը և հնագույն երաժշտության «Տաղարան» համույթը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ